



**Միկրոձեռնարկատիրության սուբյեկտի կողմից
ծառայությունների մատուցման մասով հաշիվ վավերագիր
դուրս գրելու, ինչպես նաև տվյալ հաշիվ վավերագիրը
շահութահարկ վճարողի համար ծախսը հիմնավորող
փաստաթուղթ համարվելու վերաբերյալ**

Հարց

Անհատ ձեռնարկատերը աշխատում է միկրոձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգում և ծառայությունների մատուցման հաշիվ վավերագիր է դուրսգրում ԱԱՀ-ով աշխատող կազմակերպությանը: Տվյալ հաշիվ վավերագիրը շահութահարկ վճարողի համար ծախսը հիմնավորող փաստաթուղթ կհանդիսանա, թե՞ ոչ:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ հաշվարկային փաստաթուղթը նույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ հարկ վճարողի կողմից դուրս գրվող փաստաթուղթ է, որով հիմնավորվում է՝

1) ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունք ձեռք բերելը,

2) ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը,

- 55-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերը (հարկային հաշիվ, ճշգրտող հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր, ճշգրտող հաշիվ վավերագիր) կիրառվում են ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, իսկ օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև հարկի գումարի պակասեցումները, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար,

- 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր,

- 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ համապատասխանաբար 1-ին և 3-րդ կետերով սահմանված համախառն եկամտից նվազեցվում են շահութահարկ վճարողի կատարած՝ օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, եթե նույն հոդվածի 2-րդ մասով և օրենսգրքի 113-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերը ծառայության մատուցման գործարքի մասով պարտավոր է դուրս գրել օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր, տվյալ դեպքում՝ հաշիվ վավերագիր, որով հիմնավորված ծախսը շահութահարկով հարկման բազան որոշելու նպատակով համախառն եկամտից նվազեցվում է օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

